

Նպատակ 6: Ապահովել բոլորի համար ջրի ու սանիտարական պայմանների հասանելիություն

Բոլորի համար հասանելի մաքուր ջուրը կենսական բաղադրիչն է այն աշխարհի, որտեղ մենք ուզում ենք ապրել: Սա իրականություն դարձնելու համար մոլորակում բավարար բաղադրահամ ջուր կա: Սակայն վատ տնտեսվարման կամ վատթար ենթակառուցվածքների պատճառով ամեն տարի միլիոնավոր մարդիկ, հիմնականում երեխաներ, մահանում են այնպիսի հիվանդություններից, որոնք կապված են անբավարար ջրամատակարարման, վատ սանիտարական պայմանների և հիգիենայի հետ:

Ջրի սակավությունը, վատ որակը և անբավարար սանիտարական պայմանները բացասաբար են ազդում ամբողջ աշխարհում աղքատ ընտանիքների պարենային անվտանգության, կենսամիջոցների և կրթական հնարավորությունների վրա:

Մինչ 2050 թ., ամենայն հավանականությամբ, չորս մարդուց առնվազն մեկն ապրելիս կլինի այնպիսի երկրում, որը կայուն կերպով կամ ժամանակ առ ժամանակ կրում է մաքուր ջրի սակավության ազդեցությունը:

ԻՆՉՈ՞Ւ Է ԱՅՆ ԿԱՐԵՎՈՐ

Ջրի սակավության խնդիրն ազդում է համաաշխարհային բնակչության ավելի քան 40%-ի վրա, և, ըստ կանխատեսումների, այս թիվը մեծանալու է:

Ո՞րն է նպատակը

Ապահովել բոլորի համար ջրի ու սանիտարական պայմանների հասանելիություն

Ինչո՞ւ

Ջրի, սանիտարական պայմանների և հիգիենայի հասանելիությունը մարդու իրավունք է, սակայն դեռևս միլիարդավոր մարդիկ ամեն օր բախվում են նույնիսկ ամենահիմնական ծառայությունների հասանելիության հետ կապված դժվարությունների:

Ամբողջ աշխարհում մոտ 1,8 մլրդ մարդ օգտվում է խմելու ջրի՝ կեղտաջրերով աղտոտված աղբյուրներից: Մոտ 2,4 մլրդ մարդու համար հասանելի չեն հիմնական

սանիտարական այնպիսի ծառայությունները, ինչպիսիք են զուգարաններն ու արտաքննողները: Ջրի սակավության խնդիրն ազդում է համաշխարհային բնակչության ավելի քան 40%-ի վրա, և ըստ կանխատեսումների՝ այս թիվն ավելանալու է: Մարդու գործունեության արդյունքում առաջացած կեղտաջրերի ավելի քան 80%-ը առանց մաքրման թափվում է գետերը և ծովը՝ հանգեցնելով աղտոտման:

Որո՞նք են հետևանքները

Ջրի և սանիտարական պայմանների հետ կապված հիվանդությունները մինչև 5 տարեկան երեխաների մահվան հիմնական պատճառն են մնում. ամեն տարի ավելի քան 800 երեխա մահանում է դիարեայից՝ պայմանավորված վատ հիգիենայով:

Պատշաճ ջուրը և սանիտարական պայմանները Կայուն զարգացման նպատակներին, այդ թվում՝ առողջության և գեղեցիկին հավասարության նպատակներին հասնելու առանցքային գործոններից են:

Կայուն կերպով տնօրինելով ջուրը՝ կկարողանանք նաև ավելի լավ տնօրինել սևնդամթերքն ու էներգիան և նպաստել արժանապատիվ աշխատանքին ու տնտեսական աճին: Ավելին, կարող ենք պահպանել ջրային էկոհամակարգերը, դրանց կենսաբազմազանությունը և գործել ի նպաստ կլիմայի:

Ի՞նչ կարժենա խնդրի լուծումը

Համաշխարհային բանկի խմբի, ՅՈՒՆԻՍԵՖ-ի և Առողջապահության համաշխարհային կազմակերպության կատարած ուսումնասիրության համաձայն՝ 2015-2030 թթ. ջրի և սանիտարական հիմնական ծառայությունների ընդլայնումն աշխարհի համար կարժենա տարեկան 28,4 մլրդ ԱՄՆ դոլար կամ 140 երկրների համաշխարհային արտադրանքի 0,10%-ը:

Ի՞նչ կարժենա խնդրի չլուծված լինելը

Ծախսերը հսկայական են և՛ մարդկանց, և՛ տնտեսության համար:

Ամբողջ աշխարհում ամեն տարի ավելի քան 2 մլն մարդ մահանում է դիարեայից (փորլուծություն): Վատ հիգիենան և աղտոտված ջուրը մահվան այս դեպքերի մոտ 90%-ի պատճառն են և հիմնականում ազդում են երեխաների վրա:

Ջրի և սանիտարական պայմանների ոլորտում ներդրումներ չկատարելը ենթասահարյան Աֆրիկայի տնտեսության համար արժենում է երկրի ՀՆԱ-ի 4,3%-ը: Համաշխարհային բանկի հաշվարկներով՝ Հնդկաստանի ՀՆԱ-ի 6,4%-ը կորսվում է անբավարար սանիտարական պայմանների տնտեսական ազդեցության և համապատասխան ծախսերի պատճառով:

Առանց ավելի լավ ենթակառուցվածքի և կառավարման՝ միլիոնավոր մարդիկ ամեն տարի կշարունակեն մահանալ, և կլինեն կենսաբազմազանության, էկոհամակարգի դիմակայունության հետագա կորուստներ՝ արգելակելով բարգավաճումը և ավելի կայուն ապագային ուղղված ջանքերը:

Ի՞նչ կարող ենք անել

Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները պետք է ձգտեն, որ կառավարությունները հաշվետու լինեն, ներդրումներ կատարեն ջրի ոլորտի հետազոտման և զարգացման հարցում ու խթանեն կանանց, երիտասարդների և տեղաբնիկ համայնքների ներգրավումը ջրային պաշարների կառավարման գործում:

Այս դերերի մասին իրազեկումը և դրանց վերածումը գործողության կհանգեցնի փոխշահավետ արդյունքների՝ մեծացնելով թե՛ մարդկային, թե՛ բնապահպանական համակարգերի կայունությունն ու ամբողջականությունը:

Դու նույնպես կարող ես միանալ Ջրի համաշխարհային օրվա և Չուգարանի համաշխարհային օրվա կապակցությամբ նախաձեռնություններին, որոնց նպատակն է տեղեկություններ տրամադրել և ոգեշնչել՝ իրականացնելու հիգիենայի հիմնահարցերին ուղղված քայլեր:

Կայուն զարգացման նպատակների և 6-րդ նպատակի մասին առավել մանրամասն տեղեկությունների համար կարող եք այցելել հետևյալ հղումով՝

<http://www.un.org/sustainabledevelopment>